

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀՈԳԻՈՅ ՓՐԳՈՐԹՎՐԵՆ՝

Ա.

Մարդս միշտ եւ յաւէտ թէ՛ ըստ հոգւոյ եւ թէ՛ ըստ մարմնոյ գողցես բնականաբար կը հրապուրուի ձգտիլ եւ խանդակաթ նկրտիլ կատարելութեան եւ երջանկութեան հասանելոյ համար: Ոչ ապաքէն սոցա համար եւս ստեղծւած է:

Սակայն՝ ըստ որում հոգին առաւել է քան զմարմին *), եւ մարմինն ինքնին ապականացու եւ առանց հոգւոյ յաւէտ մեռեալ մի դիակ է՝ եւ կամ ոչինչ նշանակութիւն չունի: Վասնորոյ հոգին մարմնոյ մէջ նախամեծար վիճակ եւ գերազանց յատկութեամբք ազատութեան տրամադրութիւն ունենալով՝ պէտք է որ միշտ առաջնորդվի դէպ ի յաւիտենականութիւն եւ կամ յանմահութիւն: որոյ համար միտքն եւս կը

թելադրվի յաւէտ ճշմարտութեան հետեւելոյ, միանգամայն սիրտն եւս կը հրապուրվի ի բարին դիմել եւ հանգչելոյ, որպէս զի հոգւոյ փրկութիւնն ստանալ՝ վայելէ եւ ի յաւիտենական կեանս երջանկի լինի:

Կրօնն է՝ որ կառաջնորդէ հոգւոյն, միանգամայն կուսուցանէ մարդոյս կրկին (այս ինքն՝ հոգւոյ եւ մարմնոյ) կատարելութեանց եւ երջանկութեանց հասանելոյ ճանապարհը եւ միջոցները, կհրապուրէ եւ կողեւորէ նոյն ճանապարհէն եւ միջոցներէն երբէք չհեղձիլ եւ չհեռանալ:

Բայց կրօն անուամբ աշխարհիս վերայ բազմատեսակ ազանդներ կան, որոց իւրաքանչիւրն եւս տարբեր տարբեր եւ դանազան ձեւերով վարդապետութիւններ ունին՝ եւ տարածուած են՝ ինչպէս նաեւ ստուարաթիւ կամ սակաւթիւ հետեւողներ ունենալով: որք ամենն եւս ըստ իւրեանց գաղափարացն եւ հաւատոց այնպէս կդառանին եւ կը ձգտին հոգւոյ փրկութեան և անձահո-րեան ծայրագոյն նպատակին հասանիլ:

Ահա այս վսեմ նպատակի համար է՝ որ մարդիկ ամեն ապեն եւ ամեն տեղ նախանձախնդիր են եւ անխոնջ կը հետեւին ճշմարիտ կրօնը գտանել եւ ուսանիլ, եւ կրօնի ճշմարտութիւնքը իմանալով՝ ըստ այնմ ներքին համոզում կազմել, եւ հոգւոյ փրկութիւնը և անձահո-րեանը կը թող փորձել և որանալ: Այս անուրանալի եւ հանրածանօթ մի պարզ ճշմարտութիւն է ամեն մարդու համար եւ ամեն կրօնի մէջ:

(*) Կ. Պօլսոյ Թրքաբարբառ և Հայաստան Մանուկ անուն օրագրում՝ յանցելուս խմբագրական մի յօդուածին մէջ հոգւոյ քան զմարմին առաւել լինելը հերքել կրեակայուած էր, բայց արդոյ Խմբագիրն դոնէ այսքան ևս մտածել չզիտան որ եթէ ուսնց հոգւոյ (առանց կենդանութեան) մեռելու քիչ է մարմնի, որ բնն մեռեալ մարմնը միայնակ ի՞նչ պէտք ունի կամ կարող է կատարել՝ ևս եւ ի՞նչ նշանակութիւն ունի որով միանգամայն հոգւոյ առաւելութիւն զգալի կլինի՝ եթէ մարմնոյն:

Նոր աշխարհին նոր և այսպիսի գաղափար կրող մարդկանց հետ ասկէց աւելի խօսելն օգուտ չունի:

Թ. Եւ զի զայն արարեալսն զայն արարեալսն
 Թրգարեւ ճշմարիտ կրօնը եւ կրօնի
 ճշմարտութիւնը իմանալոյ համար
 պէտք եւ բաւական է գիտենալ նորա
 գերբնական եւ գերահրաշ կատարե-
 լութիւնը եւ աստուածային յայտնու-
 թեամբ հաստատեալ յատկութիւն-
 քը եւ նշանները եւ ըստ այնմ ներ-
 քին համագմունք գոյացնել եւ հաւա-
 տալ թէ այն կամ այն կրօնի մէջ է Աս-
 տուած ճշմարտութիւնն փրկութիւնն
 եւ յաւիտենականութիւնն ինչպէս որ
 է նաեւ ճշմարիտ եւ պարզ պատկերը կը
 տեսնեմք Քրիստոնէական կրօնի մէջ,
 սակայն զայս յաւէտ ողջամիտ եւ կա-
 տարեալ մտաւորական եւ բարոյական
 կրկին գաստիարակութիւն գորդա-
 ցումն եւ լուսաւորութիւն ստացողներն
 ձիայն կարող են իմանալ եւ գիտենալ,
 իսկ տգէտ կամ աւստի ժողովուրդն
 ինքնին կարող չէ իմանալ եւ որոշել
 ճշմարտութիւնը որովհետեւ կրկնակի
 դատարակութենէ զուրկ մնացած է
 եւ զայնու ուսանել չէ կարողացած ուս-
 տի միշտ կկարօտի առաջնորդի որ
 գործքով ուսուցանէ եւ այն առաջ-
 նորդին եւս յայնժամ կհաւատայ եւ
 կհետեւի երբ նորա վերայ արտաքին
 հրապուրիչ նշաններ տեսնէ գլխաւս-
 րապէս հրաշագործութիւնք անձնա-
 նուէր շահատակութիւնք բարոյական
 գեղեցիկ օրինակներ եւ առաքինագործ
 վեանք եւ վարք միանգամայն ճարտա-
 սան քարոզութիւնք Վասնորոյ ևամ-
 ւիկն ունեցած եւ պաշտած կրօնն եւ
 հաւատքն միշտ աւազի վերայ հիմնեալ

կհամարուի եւ նա երբէք չունենալով
 կարողութիւն ինքնին հասկանալ կրօնը
 եւ նորա ճշմարտութիւնը եւս եւ գտա-
 նելիւր հոգւոյ փրկութիւնը միշտ կջա-
 նայ եւ կհետեւի ուրիշէն ուսանել եւ
 գտանել կամ այսպէս խօսիմք այլոց
 առաջնորդութեամբ զայնս ձեռք բերել
 կնայի Եւ ըստ այնմ երբ իւր սուղ-
 նորդին վերայ մի պակասութիւն տես-
 նէ այնպէս կկարծէ որ նորա վարդա-
 պետած կամ նորա միջոցով ուսած կրօ-
 նը եւս պակասաւոր է հետեւաբար հոգ-
 ւոյ գրկովն եւս չպիտի կարողանայ գը-
 տանել ուստի կը ձգտի կրօնական յեղա-
 փոխութեան կամ պարզապէս ասելով
 կրօնափոխութեան մանաւանդ երբ
 հանդիպի մի լեզուանի եւ ճարտարա-
 բան օտար քարոզչի եւս բաւական է
 որ հրապուրիչ խօսքերով նպատակնե-
 րով եւ վկայութիւններով զգածուի
 հոգւոյ փրկութիւն գտանել եւ ահա
 կփութայ ի կրօնափոխութիւն ուղէ
 քրիստոնէութիւն ինի այն ուղէ մահ-
 մետականութիւն եւ կամ պուտտայա-
 կանութիւն եւլն։

Զայս դրականապէս ապացուցանելոյ
 համար երկար խօսքերու եւ փաստա-
 բանութեանց կարօտութիւն չկայ բա-
 ւական է հետեւեալ գէպքը համառօ-
 տիւ ներկայացնելս։

Դեռ շատ տարի անցած չէ զի Ամե-
 րիկայէն մի բողոքական քարոզիչ ի
 Հնգկաստան կերթայ որ լութերակա-
 նութեամբ զՔրիստոս քարոզէ հեթա-
 նոսայ եւ Մահմետականաց մէջ սակայն
 ընդ հակառակն ինքն մահմետակա-
 նութեան քարոզիչներէն գրաւուե-

լով՝ մահամեծականութիւն կուսանի՝ եւ վերադառնալով յԱմերիկայ՝ մահամեծականութեան քարոզիչ կլինի՝ եւ կը յաջողի ոչ սակաւ բողոքականքը ի մահամեծականութիւն գարձուցանել, որք ցայսօր կան եւ կտարածուին Ամերիկայի մի կողմում:

Այս պարզ օրինակէս կտեսնուի հասարակ քարոզչի վիճակի հետ ի միասին՝ տգէտ եւ ռամիկ ժողովրդեան ծայրայեղ կուրուսթիւնը՝ մանաւանդ քարոզչին ճարպիկութիւնը եւ ճարտարախօսութիւնը՝ որ՝ եթէ կամենար՝ կարող էր փոխանակ Մահամեծականութեան՝ մինչեւ անգամ կռակաշատութիւնը քարոզել եւ արդիւնաւորել նոյնպիսի ժողովրդեան մէջ:

Արդ ճիշտ այսպէս պէտք է իմանալ եւ կշռել ամեն տեղ եւս՝ ուր ժողովուրդը տգէտ եւ ռամիկ է, եւ առհասարակ կրօնափոխութիւնն եւս միշտ տգէտ եւ ռամիկ ժողովրդեան մէջ կը լինի՝ որոց համար նաեւ աղգութիւն՝ աղգային սէր եւ նախանձ առաւել նըշանակութիւն չունի՝ բաւական է որ կրօնափոխութեամբ հոգոյ լինի՝ գտանելոյ հրապուրուի:

Տակաւին այսքանով չվերջանար:

Տգէտ եւ ռամիկ ժողովուրդը՝ ոչ թէ միայն խալառ մտօք կոյր՝ եւ կամ շատ նուազ բան ինքնին իմանալ եւ նշմարել կարող լինելով՝ շատ անգամ կմոլորուի եւ կմտուի ի կրօնական յեղափոխութիւնս գահալիժ դիմելով, այլ եւ շատ հեշտ է գայն ուրիշ առիթներու եւ

հանգամանաց մէջ եւս հրապուրել եւ զանազան նպատակներու դիմելոյ թելադրել, որոց մէջ ընդ պատրուակաւ հոգւոյ փրկութեան պէտք է որ՝ նաեւ ըստ մարմնոյ շահերը եւ օգուտները աչքի զարնեն: Ասան զի նաքա՝ աւելի իրական եղած կամ արտարին երեւոյթ ունեցող՝ այս ինքն՝ մի կերպով մարմնոյ աշուտ արեւանելի՝ յետո՛ւ շօշուփելի՝ վերջապէս լոկ զգուշ առարկաներով գաղափար եւ զգացումն կսկրեն՝ կազմել եւ կհամոզուին՝ վերացեալ խօսքերէն բան իմանալ ոչ գիտեն եւ ոչ կարող են: Չոր օրինակի ինչպէս Քրիստոսնէական կրօնի վերայ ամիսներով որքան գովեստ խօսիս եւ քարոզես՝ այնքան խօսքով կամ բերանացի եղածը աղգեցութիւն չունենար՝ որքան արագ եւ յաջող կը ներգործէ եւ կը հրապուրէ որպիսի եւ իցէ մի հրաշք յանուն կրօնի՝ որ նոցա աչաց տեսանելի եւ զգալի կլինի, եւ նովաւ առանց այլեւայլութեան եւ առանց բնականը անբնականէն կամ արտաքոյ կարգի պատահածէն նկատել եւ որոշել մտածելոյ կամ կարողանալոյ՝ իսկոյն կենդանի վկայութիւն եւ հաւատով կը մտնեն եւ կհաւատան հրաշագործին, միանգամայն ինչպէս հրաշագործն կքարոզէ՝ նոյնպէս եւս կհամոզուին եւ կհետեւին. այսպէս եւս իմացիր կենցաղավարականին համար, եւ որքան քարոզես եւ համոզել ջանաս՝ որ իւրեանց երկրի՝ քաղաքի կամ գեղի՝ եւ կամ ընտանեաց եւ սերնդոց համար գեղեցիկ կարգ եւ կանոնք, աշխարհաշէն եւ բարեգործական հիմնարկութիւնք, ուսումնարանք, թատրոնք, ար-

պարան, լսարան, այլ եւ այլ գրեանց տպագրութիւնք, հարստութեանց եւ բարւոք կենցաղաւարութեանց միջոցներ բանադոյ, հաստատելոյ եւ կատարելոյ կարօտութիւնք կան, եւ պարտին նիւթական կամ դրամական զօհողութիւններ եւ նպաստներ առատաձեռնել, որոց ամեն մարդ մասնակից լինելոյ պարտական է եւ պէտք է փութայ, արդարեւ այս ամենը եւ այսպիսիքը նոցա համար երեւակայական բաներ են, ի սոցանէ ոչինչ չեն զգար՝ որովհետեւ աչքերուն չեն երեւիր՝ այս ինքն գործնական մի աւարկայ չնեղկայանար, ուստի սոցա համար մի դրամ եւս ուզես՝ շատ ծանր կգայ եւ չկամիր վճարել, եւ եթէ վճարէ՝ պէտք է գիտնալ զի՝ սկամայ է կամ առ երկիր զին, սակայն որքան զգածեալ կըզբաւուին եւ կմխլիթարուն՝ երբ նոցա տրոց զեղջումներ լինին, պահակական տագնապներէ ապահով մնան, հարստահարիչ եւ բռնաւոր անձինքներէ հեռու եւ ազատ լինին եւլն։ Այս, այսպիսի հանգամանաց միջոցներում ռամիկ եւ տգէտ ժողովուրդն շատ անգամ կրօնափոխութեան մէջ փրկութիւն գտանել կերեւակայէ, իբր զի զինւոր տալէ, տէրութեանց տուրք վճարելէ, հարստահարութիւններէ ապահով մնալոյ, հանգիստ կենցաղաւարելոյ, ազատ եւ երջանկառիթ արտօնութիւնք վայելելոյ համար կրօնափոխութիւնն փրկառիթ մի սահման եւ ազատարար միջոց է, սակայն աստ եւս պէտք է նկատել՝ որ այն ազգի եւ կամ տէրութեան կրօնը կընդունի՝ որոյ միջոցաւ որ այս

ամենը եւ այսպիսիքը ձեռք բերել կերագէ եւ կամ հրապուրուած է*) :

Այսպէս ուրեմն որքան հեշտ է ռամիկ եւ տգէտ ժողովուրդը ըստ ամենայնի կառավարելը, այնքան եւս դժուար է զայն ամեն հակառակ ազդեցութենէ պահպանելը, վասն զի այն որ կհաւատայ մի չնչին բանիւ կամ կախարդական գործով հիւանդութենէն ազատիլ՝ մինչեւ հոգւոյ փրկութիւն գտանել՝ մանաւանդ երբ մէկուն վերայ գործնական փորձք տեսած լինի եւ կամ կատարուած լինելոյն վերայ համոզումն ստանայ, նոյնըն կարող է չնչին բանով եւս գայթակղել, մի խորամանկ անձի ձեռքում խաղալիկ դառնալ, այն կարող է օտար ազդեցութեանց եւ խարդաւանութեանց եւս շուտով ենթարկուիլ, որսացուիլ եւ հեռանալ մայրենի եկեղեցիէն՝ կրօնէն եւ ազգութենէն, թո՛ղ որ՝ եթէ մեծամեծ իրոստումներ՝ երբեմն մինչեւ անգամ բռնութիւններ եւս լինին՝ շուտով կընկճուին եւ կը տկարանան :

Երկարդարեայ եւ բազմատեսակ Ազգային եւ Եկեղեցական պատմութիւնքն այսպիսեաց նկատմամբ թէ՛ օտար ազ-

(*) Չմոռանամք յիշել նաև, զի ոմանք ևս երբեմն որպիսի և իցէ հակառակութեան կիրքէն զրգուելով և իշխանաւորաց և եկեղեցականաց դէմ թշնամական ատելութեամբ տողորուած՝ կրօնափոխութեամբ կրանան զինքեանս մխիթարել, իբր զի նոյնպիսի միջոցով վրէժ կտանուն՝ չմոռանալով իրրէք՝ զի աւելի լարեանց և սերնդոցն տուններ կքանդին :

գաց եւ եկեղեցեաց եւ թէ Հայոց Ազգի
 եւ եկեղեցւոյ մէջ շատ օրինակներ եւ
 փաստեր մթերած դէնին, զորս մանրա-
 կրկիտ հետազօտող բանասէրն՝ արդա-
 րեւ շատ տեսակ խնդիրներ կնկատե-
 ռամիկ եւ ժողովրդեան կրօ-
 նական եւ քաղաքական զգացմանց եւ
 յեղափոխութեանց նկատմամբ: Եւ ին-
 չո՞ւ չնկատեմք նոյն խակ ներկայ դարուս
 մէջ մեր օրերում ի Տաճկաստան՝ փոքր
 Ասիոյ մի քանի կողմերում՝ ի Բարձր
 Հայս եւ այլ մի քանի սահմաններում
 երբեմն պապականութեան եւ երբեմն
 լուծերականութեան ի Հայս սողոսկած
 արշաւած եւ խարդաւանած միջոցում
 անցած եւ կատարուած իրողութիւնքը
 եւ արդիւնքները՝ երբեմն Սպանիոյ եւ
 Գաղլիոյ, մերթ մերթիկոյ եւ Անգլիոյ,
 եւ երբեմն Գերմանիոյ քարոզաց . . .
 ջանիւք եւ շնորհիւ եւլն, որոց դառն
 հետեւանքները ինչպէս որ շատ տեղեր
 ծայր տուած են՝ նոյնպէս պիտի տան
 ինչպէս այս կողմերում՝ եւս բաւական
 տարիներէ ի վեր որջացած կան եւ ծայր
 տուած են:

Մամուլային
 ըստ մտաւորաց եւ ըստ մտաւորաց

Ապաքէն նկատելով մեր Ազգի եւ Ե-
 կեղեցւոյ վիճակը՝ խիստ ցաւալի եւ
 դառն է այսպիսի կրօնափոխական երկ-
 պառակուիւթիւն եւ հերձուած տեսնել,
 սակայն չէ կարելի ժխտել որ ամեն
 ժամանակ եւ զար այսպիսիք եղած են
 եւ պիտի լինին, որք չեն կարող ա-
 ւելի վնասակար լինիլ եթէ իւրեանց
 նողգութիւնը՝ Հայութիւնը՝ լեղտն՝ գը-
 բականութիւնը եւ ին՝ գոնէ՝ չուրանան

եւ չմոռանան, եւ առաւել եւս՝ գըր-
 գիւ ստանան ուսման եւ կրթութեան
 հետեւելոյ համար, որով ի ժամանա-
 կին ինքնին զգալով իւրեանց սխալ-
 մունքը՝ կապաշաւեն, եւ անշուշտ մի
 օր կջանան դիմել ի միութիւն ի մի
 կեդրոն մայրենի Ազգի եւ եկեղեցւոյ,
 ինչպէս որ սոցա օրինակները արդէն
 զգալի եղած են ի Տաճկաստան Հայ-
 պապականաց, Հայ - յունաց եւ Հայ-
 լուծերականաց մէջ, եւ քիչ միջոցէն
 եւս արդիւնքը տեսնել կակնկալեմք
 խանդակաթ:

Այսպիսի շարժմանց եւ յեղափոխու-
 թեանց առաջքը առնելոյ համար թէ-
 պէտեւ միջոցներ եւս շատ կան, բայց
 եւ ոչ մինը ապահով եւ յարատեւական
 չէ, եւ Հայոց Ազգի եւ եկեղեցւոյ հա-
 մանգամայն առաջին եւ վերջին ապա-
 հով միջոցն եւ հնարքն սա միայն կըր-
 նայ լինել, որ ժողովուրդը մանաւանդ
 նոր սերունդը ըստ կարելոյն եւ փու-
 թով դաստիարակուի, զարգանայ եւ ըստ
 մտաւորականին եւ բարոյականին ար-
 ժանաւորապէս եւ ողջամտութեամբ
 լուսաւորուի, որպէս զի ուսանին ինքնին
 գիտենալ եւ կշռել ճշմարիտ կրօնը, հո-
 գւոյ փրկութիւնը միանգամայն Հայաս-
 տանեսոյց եկեղեցւոյ սեղաւորաւորութիւ-
 նը: Այս պէտք է տալ գոնէ նոր սե-
 րունդին որքան կարելի է արագ եւ
 այնպիսի ուսումն, կրթութիւն եւ բա-
 րոյական կատարելութիւն, որ նորա
 ինքնին աւելի ոչ թէ միայն ի ներկա-
 յիս գտնուած կարճէջեալ ստանձնականաց
 պէս եւս խոսքաւ անկրօն չլինին, որով-
 հետեւ վերջինքս եւս թէեւ կրօնափո-

